ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

16.03.2016թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77[1]-77[6] հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2016 թվականի հունվարի 18-ի N 5-Ա որոշումը՝

ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ալիկ Սահակյանի /հանձնաժողովի նախագահ/, ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի գլխավոր մասնագետ Անուշ Խաչատրյանի, հաշվապահական հաշվառման բաժնի պետ Արտավազդ Բեջանյանի, հողաշինության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետ Էդգար Հախվերդյանի, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ Նաիրա Համբարձումյանի, սոցիալական ապահովության բաժնի առաջատար մասնագետ Գայանե Բոջուկյանի, քաղաքաշինության վարչության առաջատար մասնագետ Արման Մխիթարյանի, ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հախինյանի և զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Սպարտակ Ղուբաթյանի կողմից իրականացվեց վարչական հսկողություն ՀՀ Լոռու մարզի Սարալանջ համայնքում՝ ՏԻՄ-երի լիազորությունների, հողօգտագործման, ՔԿԱԳ, սոցիալական պաշտպանության, առողջապահության, քաղաքաշինության և պաշտպանության ոլորտներում:

1. Վարչական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածով ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:
2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:
3. Նշումներ /համայնքի ղեկավարի առարկությունները վարչական հսկողության արդյունքների և վարչական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/

---

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Լոռու մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Սարալանջ համայնքի ղեկավարին:

Ալիկ Սահակյան _____

Անուշ Խաչատրյան _____

Արտավազդ Բեջանյան _____

Էդգար Հախվերդյան _____

Գագիկ Հախինյան _____

Նաիրա Համբարձումյան _____

Գայանե Բոջուկյան

Արման Մխիթարյան

Սպարտակ Ղուբաթյան

Համայնքի ղեկավար՝
Արթուր Սարոյան